

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԻՆՉ ԵՆԲ ԱՆՈՒՄ.

Ի՞նչ ենք անում: Այս հարցը, երկիւղ ենք կրում, կը պորէ ընդհանուրի թմրութեան մէջ: Այս սակայն նա արտայայտում է այն մտատանջութիւնը, որն ակամայ առաջանում է, երբ աչք ես գցում չորս կողմ, հայութեան վիճակի ու տրամադրութեան վրայ: Մինչդեռ թշնամին, հարբեցած իր թափած արիւնով, կարծում է, որ այլ ևս ընդ միշտ հեռացրած է իր գլխից արդարութեան տապարի հարւածը. մինչդեռ Աւրօպան, բախտաւոր նրանով, որ կարողացաւ գէթ առժամանակ խեղդել Արեւելեան խնդիրը, խնամիական փաղաքշանքով պահում է թիւրքիային՝ ապագայում «յարմար ժամին» նրան պատառելու միտումով. մինչդեռ, միւլնոյն ժամանակ, բէակցիայի ջաղացքն իր թեւերն է թափ տալիս աջ ու ձախ ամբողջ Աւրօպայի գլխին, աղբերին, տէրութիւններին պահում շարունակ լարւած վիճակում, երբ որ և է խնդրի խճճումը կարող է յանկարծից առաջացնել ամենախիստ ընդհարումներ — ի՞նչ ենք անում մենք, հայերս: Պողտցած այն զգացումները, որոնք սուրբ էինք համարում դեռ երէկ. օտնակոխ արած այն սկզբունքները, յանուն որոնց դեռ երէկ ընդունակ էինք ցոյց տալու ամենաջերմ եռանդ, ամենազեղ յափշտակութիւն, մտքի բարձրութիւն, հոգու լայնութիւն. ծաղրելով, վատաբանելով, փշրելով այն առաքինութիւնները, որոնք դեռ երէկ մեզ առաջնորդում էին դէպի անձնադոհութիւն, նահատակութիւն, հերոսութիւն, կռիւ, — այսօր մենք թմրութեան մէջ մաշւում, ապականւում, անբարոյականանում ենք: Այդպիսով մենք պատրաստում ենք մեզ համար շատ աւելի հաւանական կորուստ, քան թշնամիների մերկ սուսերը, թնդանօթը, արած ջարդը:

Նայեցէք այդ ամբողջին: Նա դահավիժում է այսօր այն, ինչ երէկ պաշտում էր: Այս վաղըն էլ նա կարող է կրկին կանգնել այն, ինչ կործանում է այսօր: Յաւիտենական օրէնք ամեն ազգի, ամեն երկրի ամբողջի, որը չէ դատում մտքով, այլ գործում է բնագոյով: Այս սակայն հայ հասարակութեան ահազին մեծամասնութիւ-

նը — և դրա մէջ գլխաւորապէս նրանք, որոնք ամենից շատ էին պոռում դեռ երէկ — իր մտքով, իր դատողութեամբ այդ սովորական ամբողջից բարձր չէ: Այս ահա ինչու, չունենալով դատողութեան ոյժ, նա գերի է դառնում իր բնազդների, անհաշիւ, անտրամաբան, յախուռն կերպով:

Այսօր էլ անձնատուր եղած այնպիսի բնազդների, որոնք նրան շարտել են բարոյական թմրութեան ու մտաւոր խառնակութեան մէջ, նա իր ետեւից բարշտւում է դէպի այդ անդունդը նաև նրանց, որոնք յաւանութիւն ունէին և ունեն նրա առաջնորդը լինելու: Առաջնորդներ, որոնց դատողութեան ոյժը և բարոյական մակերևոյթը նոյնքան ցածր է, որոնց ընթացքն է շոյել ամբողջի բնազդները, համակերպել նրան, ջանալ վաստակել նրա աժան ծափահարութիւնները, յարմարել նրա ամեն «այո»-ին և ամեն «ոչ»-ին: Հասարակական ասպարէզը դարձրած մաքի, սկզբունքների, խղճի զազիր առեւտուր, փանաբիւսները (mediocrité), իմաստակները վիտում են այնտեղ, իրանց թագաւորելու օրը հասած համարելով, իրանց կրքերին, տկար մտքին ու բնազդներին սանձարձակ ընթացք տալով: Այս մի շարք զառանցանքներ, հասարակական հարցեր անւան տակ, զառանցանքներ եկեղեցական, կրօնական անհաշտութիւններ, հրապարակազրական իմաստակութիւններ, թիւրքահայ-ռուսահայ խրտութիւններ, որով վերջինին վիճակում է շատ հարւածների ենթարկել տխմարների, տհասների ու նենգամիտների կողմից. ապա հասարակական գործիչների մինչև իսկ անձնական, ընտանեկան կեանքի դէմ ամեն տեսակ զլւելի կեղտազեր, ստորաբարձ պասկիլներ, որոնք միայն իրանց հեղինակների ապականւած մտքի ու սրտի նկարագիրներ են. ապա, վերջապէս, աղատամտութեան քօղի տակ՝ ի ցոյց հանել ամենայետադէմ կարծիքներ, դռնհակաւ մտքեր, զգացումներ ու նախապաշարումներ, խաւարամիտ յաւանութիւններ, անբարոյական ոտնձգութիւններ զաղափարի շրջանում — մի խօսքով այն բոլոր հնացածն ու փրտածը, տգեղն ու վատը, որ յեղափոխական դադափարի տիրապետութեան միջոցին հայութեան վրայ, անցեալ տարիների ընթացքում, մտքը, մարմինը,

ջնջել և, թուում էր, իսպառ անհետացել էր, և կլանել էր այդ մեծ գաղափարով, այսօր ահա կրկին երևան է եկել իր ամբողջ զօրութեամբ: Եւ ազգային ընդհանուր պայքարը, ընդհանուր ինտերէսը, ընդհանուր շահը, որ դեռ երէկ տիրում էր ընդհանրութեան, այսօր փոխարինել է մանրացած, պստիկացած ինտերէսներով, ժամավաճառ պայքարներով, յետադիմական ու մանրացած ոգով:

Ահա թէ ինչ ենք անում այսօր:

Եւ սակայն հայ ժողովրդային դատն անփոխ՝ դեռ կանգուն է: Ուրեւանի պէս նա տակաւին կանգնած է ամեն-մի զգացող ու մտածող հայի առաջ: Եթէ հայ հասարակութիւնն անձնատուր է եղել ընկալիչի անբարոյականացման, բայց հայկական դատը և նրան լուծող յեղափոխական գաղափարը, վսեմ ու սուրբ, պահանջում են իրանց գործադրութիւնը: Ոչ, աշխարհիս հզօրների դէմ ժղած մի յանդուգն ճակատամարտի սոսկալի պարտութիւնը բնաւ վերջնական պարտութիւն չէ: Հայ ժողովուրդը դեռ մեռած չէ: Մենք կարող ենք վերակենդանութիւն, նոր եռանդ, նոր շունչ տալ հայ ժողովրդային դատի ուշագնաց մարմնին: Մենք կարող ենք ունենալ ու պատրաստել այն միջոցները, որոնցով կարող լինենք զործել յարմար պարագային՝ յաղթանակի համար: Մեր պարտքը դէպի մեր դաւոր մենք դեռ չենք կատարել: Նա մեր առաջն է. նա խօսում է մեր մտքին, մեր խղճին, մեր սրտին:

Եւ սակայն ինչ ենք անում այսօր հայերս...

ԹՂԹԱՅՈՒԹՅՆՆԵՐ ԿԻԼԻՎԻՍՅԻՑ.

10 փետրւար, 1898.

Ինչպէս Հայաստանի, նոյնպէս Կիլիկիայի հայոց ներկայ վիճակը բոլորովին անտանելի է դարձած: Ամեն կողմ միենոյն գաղանային արարքներ, բռնութիւն, կեղեքում, սպանութիւն, հալածանք, որոնց ենթակայ է հայ ժողովուրդը: Ամեն կողմ բացակայութիւն կեանքի, պատւի և ստացածքի ապահովութեան: Վերջինս լոկ մի բառ է, որը կ'արտասանուի մեր ականջներին թիւրք սուլթանի և նորա հաւատարիմ ոտնալէզ օրմանեանների և ազգային դաւաճանների կողմէ:

Երբք Զէյթունցիներ մեկնած էին Ալբիստան հացահատիկ գնելու համար: Վերադարձին նոքա չարաչար կերպով խողովողութեան թիւրքերի կողմէ: Նոցա ձեռները, ոտքերը, բութերը, ականջները, վերջապէս ամբողջ մարմինները կտրատուած էին հարիւրաւոր մասնիկների: Սոյն սպանութիւնը կատարուած է շրջակայ թիւրքերի միջոցով, որոնք, ինչպէս պարզ է, կանխապէս դարանի էին մտած ճանապարհի նեղ անցքերի մէջ և խաբեարյութեամբ յարձակած հայերի վրայ:

Զէյթունցիների մէջ առաջացաւ մեծ յուզում: Չայրացած, նոքա կառավարութիւնէն պահանջեցին ոճրագործների անմիջական ձերբակալութիւնը և պատժելու: Միաժամանակ գրգռուած թիւրք պաշտօնեանների

դէմ նոքա կը կանչէին, թէ կառավարութեան հաստատութիւնը գաղափար մէջ թող տուած են այն պայմաններով, որոնք գնուած են իրենց արիւնների գնով, ամենաթանգ զոհողութիւնների շնորհով և որոնց զօրութեամբ ինքը՝ կառավարութիւնը խոստացաւ և պարտաւորութեամբ զսպել ժողովանդ թիւրքերի կրքերը, չը խրախուսել անոնց թշնամական արարքները և պաշտպանել հայերի կեանքը, պատիւը, բոլոր իրաւունքները գաղափար ամեն կողմ: Սակայն բանի որ կառավարութեան ներկայութեան ևս իրենք անապահով են Զէյթունէն դուրս գնալու, իրենց կենսական պետքերը հայթայթելու, բանի որ թիւրքական սահմանների մէջ կը թաղանթին, կը սպանուին, և կառավարութիւնը անուշադիր կը մնայ կամ անկարող կը գտնուի վերացնելոյն դժոխային դրութիւնը: Ուրեմն նա ինչ նպատակի համար գոյութիւն ունի և ինչու է հաստատուել Զէյթունի մէջ: Եթէ Զէյթունցիներն Զէյթունի մէջ պաշտպանելու համար է, մենք կարիք չունինք մեր բաղադրի կամ մեր լեռների մէջ որ և է պաշտպանութեան. մենք կարող ենք պաշտպանել մեր երկիրը:

Տեղական կառավարութիւնը՝ իր սովորութիւնների համեմատ՝ զանազան յուսադրական երգեր երգեց, խոստացաւ շուտով ձերբակալել ոճրագործները և այդպէսով հազիւ կարողացաւ հանդարտեցնել կատաղած ամբոխի զայրոյթը: Հեռագիրները՝ Զէյթունի, Ալբիստանի և Մարաշի մէջտեղ՝ սկսան արագ կերպով գործել. մի բանի թիւրքերը ձերբակալութեան երբև ոճրագործներ, բայց տակաւին հաստատուած չէ թէ նոքա սպանութեան իսկական հեղինակներն են:

Յայտնի արիւնարբու Ալի փաշան (Զէյթունի Ալբիստամբութեան միջոցին միւրալայ Ալի բէկ), որը մասնաւոր նպատակով այցելութիւններ արաւ Կիլիկիոյ զանազան վայրերը, այժմ աւարտած, երկու վաշտ զինւորներով Ատանայէն մեկնեցաւ դէպի Զէյթուն: Սուլթանի սոյն հաւատարիմ պաշտօնեայի այցելած բոլոր վայրերը, Կիլիկիայի մէջ, զանազան պատուակներով ձերբակալուած են այժմ հարիւրաւոր աչքի ընկնող անձնաւորութիւններ:

Այն ամեն տեղ, ուր հայերը մեծ թիւ կը կազմեն տեղի ազգաբնակչութեան մէջ, պաշարուած են թիւրք զինւորներով և տակաւին նորանոր վաշտեր ալ կաւենան հների վրայ պաշարման գործը աւելի խրստացնելու համար: Ճանապարհների վրայ, լեռների մէջ համեմատական հեռաւորութեամբ հաստատուեցան «պահականոց» անւան տակ աւազակախմբեր, որոնք բաղկացած են մի.մի տասնեակ զինւորներով: Հայ ճամբորդները և հայ քարաւանները անխնայ կերպով կը կողոպտուին, կը սպանուին նոյն այդ պահակների և կամ թիւրք աւազակների կողմէ, որոնք իրենց կատարած քաղաքործութիւնների համար, կընդունեն պաշտօնեայների խրախուսան ու օգնութիւնը: Հայ գիւղացին կամ քաղաքացին ստիպուած է ամբողջ օրով, անօթի, մերկ, կարօտ մարդկային կենսական բոլոր պէտքերի, փակուել իր տանը և ողբալ իր անստոյգ վիճակի մասին:

Սուլթանի վայրենի կառավարութիւնը, առանց ուշադրութիւն անգամ դարձնելու հայերիս այժմու տրտեսապէս բոլորովին քայքայուած վիճակը, որի միակ հերոսն է ինքը՝ մեծ մարդասպանը, սկսած է ամենախիստ կերպով հաւաքել նաեւ տուրքերը: Վճարելու անկարողները ենթարկուած են բանտարկութեան, ծեծի

և նախատինքների: Հայ ժողովուրդը ստիպուած է տան մէջ ունեցած ամենամանհրաժեշտ կահկարասիները վաճառել շատ աւելի նազ արժեքով ճողովարելու համար պատիւը կամ կեանքը թիւրքական զգւելի և լպիրշ հարկահաւաքների և պաշտօնեաների ձեռքէն: Վերջերս բացի զինւորական և այլևայլ տուրքերէ, որոնց մեծագոյն մասը, իբր թէ, շնորհուած էր հայերին «ողորմած» սուլթանի կողմէ, իւրաքանչիւր անհատէ կը պահանջուէր նաեւ տան և ութ գահեկան ողջ գրամ մի նոր տուրք՝ «երկաթուղիներու շինութեան» անունով: Իբր թէ Ատանայէն մինչև Բիրէճիք երկաթուղի պէտք է ձգուի և այդ պատրուակով կառավարութիւնը կը կողոպտէ ժողովրդին: Բայց որով համար դադարիք է, որ այդ հաւաքուած գումարները երբեք իրենց նպատակին չեն կարող գործածուել և միայն կը պարարտացնեն անբարոյական պաշտօնեաների գրպանը, և կամ սուլթանի սնանկացած դանձարանը: Միթէ Մերսին-Ատանա գծի շինութեան համար իր ժամանակին ժողովրդէն չը կողոպտուեցաւ տասնեակ հազարաւոր ոսկիներ և յետոյ նոյն ճանապարհի շինութիւնը չը վաճառուեցաւ եւրօպական երկաթուղային ընկերութիւններին:

Թիւրք կառավարութիւն կոչուած աւազակային կազմակերպութիւնը, իր ծակ անտուկը լեցնելու համար, ամեն ժամանակ կը ստեղծէ նորանոր եկամուտներ՝ կողոպտելով և յափշտակելով միլիօնաւոր ժողովրդներ շախտառքը: Այս օրերը զորոյցներ կը շրջին, թէ սուլթանը մի նոր իրադէ է հանել մի-մի մէճիգ պահանջել իւրաքանչիւր հայէն «իհանէի» տուրք անունով: Ահա մի նոր տուրք որը պէտք է գանձուի այն հասարակութեան, որի տունը, պարտէզն ու գոյրը թալանուած, հրդեհուած և աւերակ են դարձած նոյն իրեն՝ սուլթանի՝ յատուկ իրադէներով:

Ահա այս է առհասարակ ամբողջ թիւրքահայերիս ներկայ կացութիւնը, կացութիւն, որը շատ աւելի տուկալի է բան թէ կոտորածների կարմիր թաւկանների ժամանակ: Ներկայ վիճակը աւելի սպառնական է ընդհանուր հայութեան նկատմամբ:

Եւ հակառակ այս անստոյգ և տարտամ վիճակի, գէպի որը իւրաքանչիւր ազնիւ հայ պարտաւոր է լուրջ վերաբերութիւն ցոյց տալ, օրմանեաններ և այլևայլ ազգային դաւաճաններ իրենց տխուր գործերով կը գան աւելացնել հայ ազգի ընդհանուր թըշուառութեան չափը: Պատրիարք Օրմանեանը սրտաբուռն մաղթանքներ և ալեւուաններ կը կարգայ իր «վեհապետի» հարիւր հազարների արիւնով սնուած գահի՝ կենացը երկարութեան և նորա գահի անսասնութեան համար: Փոխանակ տեսնելու այն մեծ վտանգը, ընդհանուր սարսափը, որոնցով շրջապատուած են այսօր ազգի միլիօնաւոր զաւակները, փոխանակ ըմբռնելու իր պարտականութիւնները և պաշտպան հանգիստանալու ժողովրդի իրաւունքներին, միմիայն անձնական հանգստի, փառքի և փայլուն շքանշաններ ստանալու ակնկալութեամբ երախտագիտական թղթեր կը տայ ոճրագործին և այն ալ յանուն ընդհանուր հայութեան... Իսկ իրենք իրենց «ազգային գործիչներ» հրատարակող մի կարգ բազմաթիւներ, ազգասիրութեան վարագործի ետեւ թագնուած դաւաճան խաբւբաներ, ջիզլիտներ, ստորաբարձներ տակաւին, առանց մի փոքր խղճի խայթ իսկ զգալու ժողովրդի տանջանքների առաջ, կը ջանան յուսահատական որոմներ սեր-

մանել հասարակութեան մէջ, յետադիմական գաղափարներ տարածել, թուլացնել, ընկճել ժողովրդի կամքը, գիտակցութիւնը և տոկոսութիւնը: Սակայն թող շարունակեն այդ ստորաբարձները, սուլթանի ալդ շնիկները իրենց ազգակործան դերը, թող ճգնին հաւատարմութեամբ կատարել իրենց բարեխնամ հօր՝ սուլթանի կամքը, հրամանը: Այդպիսիներին այս դառն ժամանակներ մենք ունենք, ժողովրդի հետ միասին, մեր արհամարանքը, մեր թուրքը: Այդպիսիներ ժողովրդի ծոցէն վիժուածներ են, խորհացած և անբարոյականացած զաւակներ են: Միանգամ ընդմիշտ որոշած մեր ճանապարհը, ասած մեր վերջին խօսքը, մենք ևս կը շարունակենք մերը. — կամ ապրել ազատ և կամ, փոխանակ մի օրւայ մէջ հարիւր անգամ մեռնելու՝ մէկ անգամ, բայց հերոսի պէս մեռնիլ...

Յ. Գ. Երկու հարիւր բէտիֆներէ բաղկացած մի խումբ զինւորներ Ալէքսանդրէտէն Մարաշ մեկնած ժամանակ, թալանի տուին ճանապարհի վրայ գտնուած Էօզէրլի հայաբնակ գիւղի մի բանի խանութներ և տներ:

ՄԱՍՏԱՆԻՑԻ.

• • • • •

25 Յունւար 98.

Միլիկիայի հայոց վիճակը գնալով աւելի և աւելի կը վատթարանայ և կընդունի անմխիթար կերպարանք: Կառավարական անվերջ բռնութիւնները, բարբարոս խուժանի ֆանատիկոսութիւնը և երկրի տնտեսական անկումը գոյսքի են դարձուցած հայերի կեանքը:

Ամբողջ կիլիկիայի, նոյնպէս և Մարաշի մէջ զանազան պատճառներով ձերբակալուեցան վերջերս Էրեսունէն աւելի հայեր, որոնց մի մասը կաշառքի շնորհով մի բանի օր յետոյ ազատ թողուեցան, իսկ մնացածները, անկարող լինելով գոհացնելու կաշառակեր պաշտօնեաներին, տակաւին կը մնան տեղական խնսաւ բանտի մէջ: Ամեն տեսակ գազանութիւններ, նախատինք, չարչարանք անպակաս են հայ բանտարկեալներ ի համար: Մի բանի օր առաջ տոսկալի տանջանքների տակ մեռաւ 20-Մարգանցի դաւաճի Վասիլի 16—17 տարեկան պատանին, Սարգիսը, որի յանցանքն էր եղած՝ իր մի ընկերոջը դրած նամակի մէջ՝ անկէ բնարի լար խնդրելը: Այդ բաւական էր արդէն: Մարաշի կառավարութիւնը բնարի լարին վերագրելով երևակայական մեկնութիւններ և տալով քաղաքական գոյն, անմիջապէս հեռագրած է Պայաս և ձերբակալել տրուած պատանուն: Պայասի կառավարութիւնը Նարգիսի շղթայած և հետիոտն ուղարկեց Մարաշ:

Խուժանը, կառավարութեան թելադրութեան համաձայն, ամբողջ երեք օր չը յանձնեց զոհի դիակը հօրը, որը իր տղու հետ միասին Մարաշ էր եկած: Կատաղած թուրքերը յայտնեցին, թէ սպանուածի մարմինը պէտք է թաղեն իրենց գերեզմանատան մէջ մահմեդական արարողութիւններով: Հայրը իր սիրելի որդու գէթ դիակը ստանալու համար պարտաւորուեցաւ մի յայտնի գումար կաշառք տալ տեղիս կառավարութեան, որը ստանալէ յետոյ միայն պաշտօնեայները յօժարեցան յանձնել դիակը իր հօր:

Մարաշի թէ շուկաների և թէ թաղերի մէջ ի գործ կը դրուին ամեն տեսակ չարագործութիւն, գողութիւն ևն: Կառավարութիւնը անկարող է, աւելի ճիշտը, չի կամենար արգիլել անկարգութիւնների ընթացքը, այլ ընդհակառակը կը բաջալերէ և իր կողմէ հրահանգներ կուղարկէ խուժանին, վերջինիս պարագը-

լուս աղաների միջոցով:

Այլ երջերս Մարաշ հասան մեծ թուով րէտիֆներ, որոնց յայտնի մասը ճանբուեցան գէպի Զէյթուն և շրջակաները: Գողութիւն, աւարառութիւն, մասնակի սպանութիւններ անպակաս են եղած նաև Զէյթունի շրջապատը: Զէյթունի բնակիչները անկարող են եղած Զէյթունէն դուրս գալ կամ հաղորդակցութիւն ունենալ մատակարար բաղաբների հետ իրենց կենսական պէտքերը մատակարարելու համար:

Արտորածների կարմիր թուականը վերանորոգուելու մասին այստեղ թիւրքերի մէջ կը պտտի զանազան լուրեր: Հայ ժողովուրդը ամեն օր կը սպասէ իր ճակատագրական ելքին:

Այլ երջին ժամանակներս Չոք-Մարզանի մէջ ևս ձերբակալուել են բազմաթիւ հայեր: Բանտարկեալներէ մին՝ Մովսէսեան Մովսէսը՝ ամեն օր չարաչար ծեծի և տանջանքների կենթարկուի դայմագամի մասնաւոր պատուէրի համեմատ: Պայասի կառավարութիւնը բազմաթիւ զինւորներով և ոստիկաններով յանկարծակի կերպով կը պաշարէ և խեղդ կերպով կը խուզարկէ գերեզմանատան մէջ գտնուած եկեղեցին՝ յոյս ունենալով այնտեղ գտնել յեղափոխական թղթեր զէնք և լին: Ոչինչ չը գտնելով՝ դայմագամը զայրացած դիտաւորութիւն յայտնած է խուզարկել նաև հայոց գերեզմանները, բայց չը գիտենք, ինչ պատճառով, յետաձգեր է այդ:

Այս խնդիրների կարգադրութեան համար ձեպէլի Միւթէսարիֆը մեկնել է Պայաս: Քննութիւն բաց անելով նա հասկացել է, որ այդ բոլորը մի բանի թիւրք գլխաւորների կողմէ գործադրուած չարամտութիւններ են և անմիջապէս ազատ է արձակել բանտարկեալները, որպէս և վերև յիշուած Մովսէսեան Մովսէսը: Չոք-Մարզուանը 6-7 հարիւր զինւորներով պաշարման վիճակին է ենթարկուած նաև այժմ: Թիւրք զինւորները ամեն տեսակ չարիք կը հասցնեն եղեր տեղի ազգաբնակչութեան: Գողութիւն, աւարառութիւն գրեթէ միշտ անպակաս են եղած... բայց զարմանալի չէ, հապա ինչով պէտք է ապրին այդ հարիւրաւոր թշուառ, անօթի զինւորները, բանի որ իրենց սովորական թայինը (300 տրամ հաց) անգամ կանոնաւոր կերպով չը յանձնուիր: Նոյն իսկ յիսնապետներէն մին 4-5 հաց կը խնդրէ մի հայէն՝ յայտնելով, որ երեք օրէ իվեր փոխանակ 300 արէմի՝ 100 տ. հաց կը ստանան և այդ օրը մի հիւր ունենալով արդէն ցերեկը վերջացած է հացը:

Ինչպէս և Պոլսի, նոյնպէս Կիլիկիայի այլալը կողմերը, մասնաւորապէս նաւահանգիստների մէջ, երևան են եկած բազմաթիւ լրտեսներ, որոնք թիւրք կառավարութեան կողմէ կը ստանան կանոնաւոր ամսաթոշակ իբրև վարձատրութիւն իրենց հաւատարիմ ծառայութեան: Մի բանի շարաթ առաջ յայտնի լրտեսներէն մին՝ Յակոբ Էլմասեան անուն՝ Ալէքսանդրէտէն և Պոլսի ուղևորուեցաւ. իսկ նորա տեղ չալէբէն Ալէքսանդրէտ հասաւ Կարապետ Մամիկոնեան անուն ստորաբարշ հայը, յայտնի լրտես:

ՄԱՍՏԱՆԻՑԻ

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

2 Յունուար, 1898.

Երկու ամիսէ ի վեր վանը կարծես պատերազմա-

կան բանակատեղի է: Չորրորդ բանակը շարժման մէջ է. ամեն օր նոր ժամանում նորանոր վաշտերի՝ ուղարկուած խորքերէն, Կարինէն, Մուշէն և աւելի հեռի նահանգներէն: Այս բոլորը, որոնց մէջ երկու վաշտը զինուած են մազէրի հրացաններով, անմիջապէս ցրուեցան սահմանագլուխները: Կերթոնական կառավարութեան կողմէ ամեն օր կը հասնին հրահանգներ և ստատիկ հրամաններ՝ նահանգիս րէտիֆ և մուստահաֆըզ զինւորների ամբողջութիւնը հաւաքելու համար: Թիւրք ժողովուրդի աշխատանքի ու վաստակի միակ ժամանակն է այս ամիսները, բայց այդ կենսական պարագան առանց նկատի առնելու, բոլորը զէնքի սակ կը կանչուին: Պահեստի զինւորները միասին հաշուած, այսօր 20-էն աւելի զինուած վաշտեր հաւաքուած են Վասպուրահանի մէջ: Կառավարութեան այս շուտափոխ լե միանգամայն պաղարիւն վարմունքը մեծ իրարանցում և յուզում առաջացուց հայ և թիւրք ժողովուրդի մէջ: Վերջինները երկիւղ կրէլով, որ այս ամենը նախապատրաստութիւններ են առաջիկայ պատերազմների և որի համար իրենց կառավարութիւնը վերջին յուսահատական միջոցները կը գործադրէ, սաստիկ գրգռուած են սուլթանի բռնած այս ընթացքի դէմ:

Այս ամենի պատճառը, նոյնպէս և մեր վիճակը, մութ և անորոշութեան մէջ կը գտնուին: Միայն ինքը՝ սուլթանը՝ կը գործէ և գիտէ իր անելիքի մասին: Երբ կը հարցուի զինւորական և բաղաբային բարձրաստիճան պաշտօնեաներին, թէ ինչ կարող է լինիլ նպատակը զօրքերի անընդհատ համախմբման վանի մէջ կամ սահմանագլուխները, նորա կը պատասխանեն, թէ մենք և թէ մեր կուսմանաւորը ոչինչ չը գիտենք:

Վաղաքիս կամ Այգեստանի մէջ նշանակութեան արժանի դէպքեր չեն պատահած: Մշտական սարսափը, կեղեքում, սպանութիւն, կրօնափոխութիւն և պատուի լըլ-կումը արդէն դարձել են օրվորական գործեր՝ մեր շուրջը, ամեն օր, ամեն քայլափոխին և կարծես պայման հան դիսացել մեր առօրեայ կեանքի մէջ: Յանկարծակի խուզարկութիւններ կը կատարուեն դէթ մի բանի օրը մէկ անգամ: Ժողովուրդի յուսահատութիւնը մեծ է և ձանձրացած իր անտանելի դրութենէն: Իսկ հայ գիւղացին իսպառ կորսնցուցած է իր ինքնուրոյնութիւնը. նա զրկուած է իր դաւաճանքէն, մշակութեան գործիքներէն, կեանքի ապահովութեան պայմաններէն և ճարահատ այս ու այն թիւրքի կամ բիւրտի հովանաւորութեան ներքեւ շարաչար կաշխատի՝ անոր հաշուոյն բաժանելու համար արդիւնքը:

Բարենորոգութեան հարցը ևս հիննալով՝ թաղուեցաւ մոռացութեան մէջ՝ իր ետեւ թողլով 5-6 հայ և թիւրք ոստիկաններ: Ինչպէս երկու երեք տալիս առաջ, նոյնպէս և այժմ՝ դրամական տագնապը նկատելի է կառավարական շրջանակների մէջ: Զինւորականները գոնէ մի կտոր չոր հաց կը ստանան տեղացիները խաբելով, մինչ քաղաքային պաշտօնեաները ոչ թոշակ կընդունին և ոչ հաց: Կաշառակերութիւնը միակ պայմանըն է տեղական ղեկավարի, իսկ սովալլուկ զինւորների հրտցաններ ծախելը շատ սովորական է դարձած:

Այս մի տարուայ ընթացքի մէջ 4-5 կուսակալներ կարգուեցան, որոնք քիչ ժամանակէն իրենց հրաժարականները տուին՝ չը կարողանալով դիմանալ տիրող դրամական անձկութեանց և անկարգ վիճակին: Մեծաքանակ մարթինի և ռազմամթերք բաշխուեցան սահմանագլխի շրջա շախիթներուն, իսկ թիւրք ժողովուրդին՝

Հին, ծանր կափակլի հրացանները: Մարտկանցոց աշի-
րէթը, Բաղէշի կուսակալութեան մէջ, տակաւին ապս-
տամբ է և կառավարութիւնը համարձակութիւն չու-
նի զօրք ուղարկել այնտեղ զսպելու համար:

ՄԻՐԱԶ.

ՆԱՄԱԿ ԲԷՅՐՈՒԹԻՑ

4 Յունվար, 1898.

Վեկտեմբերի 28-ին տեղս ժամանող մի Մէսա-
ժըրի շոգենաւէն ցամաք հանուեցաւ Թէօն թիւրքերին
պատկանող և Բ. դրան պաշտօնեաներէն մէկը՝ Սայիդ
բէկ անունով: Սուլթանի կառավարութեան կողմէ կաս-
կածուելով, սա ինքզինք կը նետէ Փրանսական այդ շո-
գենաւի մէջ՝ Եւրոպա անցնելու համար: Շոգենաւը երբ
ջախճանայ էր հանդիպել տեղական կառավարութիւնը,
Բ. դրան հրամանների համաձայն, ջանացել էր ձերբա-
կալել այդ փախստականին, բայց անաջող դուրս եկել:

Շոգենաւը Բէյրութի նաւահանգիստը սպասեց ամ-
բողջ երեք օր: Առաջին օրն իսկ կուսակալը և ոստի-
կանութիւնը խիստ դիմուքներ արին նաւապետին՝ փա-
խստականը իրենց յանձնելու նպատակով, սակայն թէ նա-
ւապետը և թէ Փրանսական հիւպատոսը մերժեցին այդ:
Երկրորդ օրը միայն նաւապետը զիջանեցաւ, ահամայ,
և Սայիդին յանձնեց թիւրք կառավարութեան: Ինչպէս
յայտնի եղաւ, սուլթանը, Վ. պօլիս, դիմուքներ է արել և
շատ թախանձել Փրանս, գետնական տան այդ խնդրի առ-
թով: Դեռսպանը ի վերջոյ համաձայնուելով, հեռագրով
Սայիդին յանձնելու հրահանգ է աւել տեղիս հիւպա-
տոսարանը և այդ հեռագրի ատացուելէ յետոյ է միայն,
որ նաւապետը տեղի տուաւ թիւրք կառավարութեան
պահանջների առաջ: Սայիդը շոգենաւէն ցամաք
առաջնորդուած ժամանակ բողոքեց Փրանս. գետնական
այդ արարքի դէմ ասելով, թէ ինք հաւատ ընծայելով
Փրանս, կառավարութեան օրէնքներին և պատահին, ինք
իրեն յանձնել էր Փրանս. շոգենաւը և դրուել նորա դ-
րօշի պաշտպանութեան տակ: Բայց այժմ, ինչ որ յայտ-
նի է, չարաչար սխալուել է: Նաւահանգիստը ոտք դնե-
լուն պէս անոր շրջապատեցին բազմաթիւ սուլթանոր
ոստիկան զինուորներ և տարին ուղղակի կառավարական
պալատը: Նա այժմ բանտարկուած է ինչպէս ոճրագործ
և կը գտնուի ամենախիստ հսկողութեան տակ:

ԲԱԶԷ.

ԷՄԻԼ ԶՕԼԵ.

Վերջին մի բանի ամուսայ ընթացքում բոլոր երկր-
ների լրագիրները լքցւած էին Էմիլ Զօլայի յայտնի
խնդրով, բոլոր երկրների հասարակութիւնները լար-
ւած ուշադրութեամբ հետևում էին Փրանսիական այդ
ազգային գրամային: Այդ խնդրին այլ ևս դադարել
էր զուտ Փրանսիական լինելուց: Նա դարձել էր մի-
ջազգային: Գերմանական ու իտալական երեսփոխանա-
կան ժողովներում իսկ այդ խնդրին ունեցաւ իր բա-
ժինը: Եւ ինչու այդ բոլորը: Թուում է, թէ խնդիրը
շատ պարզ էր: Մի մեծ գրող, որի տաղանդի վրայ
այսօր հիանում է ամբողջ բաղաբաղիր լաշխարհը,
տոգորուած մարդասիրական զգացումով և նախանձախն-
դիր ճշմարտութեան ու արդարութեան, բարձրացնում

է իր հզօր ձայնը, յայտարարելով աշխարհին, թէ իր
ազգի զինուորական ատեանն ապօրէն կերպով է դա-
տապարտել ամենածանր ամբաստանութեամբ Փրանսիա-
կան մի սպայի: Փրանսիական հասարակութեան մտածող
մասը, նրա մտաւոր ներկայացուցիչները, բաղաբաղան ա-
մենանշանաւոր անձեր, գիտնականներ, գրողներ, ամեն ա-
ռաջագիմականներ ու սօցիալիստներ և այլն, ամենքը ձայ-
նակցեցան Զօլային: Ամբողջ Եւրոպայի ու Ամերիկայի
հասարակութիւնների ղեկացող ու մտածող շրջանները,
ինտելիգենցիան նոյնպէս միացրին Զօլայի բողոքին ի-
րանց բողոքը, յայտարարեցին նրան իրանց համակրու-
թիւնը, շնորհաւորեցին նրա բաղաբաղանական արիւն-
թիւնը *): Եւ Զօլան պաշտպան հանդիսանալով ճշմար-
տութեան, ախոյեան կանգնելով ճշւածների (ինչպէս
անցեալ տարիները հայերի պաշտպան էլ հանդիսա-
ցաւ), բողոքելով այն ամեն գործողութիւնների դէմ,
որոնք իր հայրենիքի արդարադատութիւնը դարձնում
են ամեն տեսակ անխոստովանելի զգացման գործիք երկ-
րի զինուորական ու բաղաբաղան իշխանութիւնների ձեռ-
քը, Զօլան, այդ մեծ գրողը, հանդիսացաւ միանգամայն
մեծ հոգի, մեծ հայրենասէր, մեծ, բաղաբաղի:

Խնդիրը դուռն էր պարզ կերպով: Արդեօք Դը-
րէյֆուսը դատապարտուած էր իրաւամբ, թէ ոչ: Այլ
խօսքով — արդեօք Դրէյֆուսի դատը կատարուած է ե-
ղել օրէնքի պահանջների համաձայն, արդեօք նրան և
նրա պաշտպան-փաստաբանին ներկայացնել է որ և է
վկայաթուղթ, որի հիման վրայ Դրէյֆուսը դատապարտ-
ւեցաւ իբրեւ մատնիչ, թէ ոչ: Նշանաւոր bordereau —
միակ յայտնի վկայաթուղթ, որն իբր ապացոյց է ե-
ղել Դրէյֆուսի յանցանքի, այժմ բազմաթիւ հեղի-
նակաւոր մասնագէտների բնութիւնից երեւած է գա-
լիս, որ Փրանսիական մէկ ուրիշ սպայ Էստէրհազի
ձեռագիրն է և բոլորովին նման է Հրէայ Դրէյֆուսի
ձեռագրին: Հետեւաբար, կասկած է ծագում, որ Էստէր-
հազին ինքն է մատնիչը և կամ նա — ուրիշների գոր-
ծակցութեամբ և կամ նոյն իսկ հրամանով — կեղծել է
Դրէյֆուսի ձեռագիրը: Ինչ էր մնում անել Փրանսիա-
կան կառավարութեան խնդրի այդպիսի դրութեան առջև:
Նրան մնում էր միայն հասարակութեան տալ որոշ ա-
պացոյց, թէ Դրէյֆուսը դատապարտուած է օրէնքի
համաձայն և անժխտելի վկայաթղթի հիման վրայ:
Թուում է, թէ ամեն մէկ ուրիշ երկրում այդ խն-
դիրը երեւան գալով, վերաբնութեան կենթարկւել,
որով և ճշմարտութիւնը նոյն օրինական եղանակով կը
պարզւէր: Սակայն Փրանսիայում այդպէս չեղաւ: Ֆը-
րանսիական կառավարութիւնը յայտարարեց, որ զինու-
որական ատեանի անդամներն անսխալականներ են — և
իսկապէս նրանց դրեց օրէնքից բարձր. պատրուակեց
ինչ-որ գաղտնիք, որ իբր շօշափում է ազգային պաշտ-
պանութեան խնդիրը — մինչ իսկապէս ազգային պաշտ-
պանութեան ամենամեծ վտանգը նրանումն է, որ զին-
ւորական բարձր իշխանութիւնն անարժան է իր պաշ-
տօնին. հրաւիրեց Էստէրհազիին դուռն փակ դատի, որպէս
զի նրան արդարացնէ և մաքրէ ամեն կեղտերից — մինչ
այդ սպան անմիջապէս պէտք է զօհէր իր զինուորա-
կան համազգեստից հենց թէկուզ այն ստոր ու թըշ-

*) Խորացանչիւր շաբաթ, մի քանի ամուսայ ընթացքում,
այդպիսով Զօլան ստանում էր տամնակ հազարաւոր նամակներ
ու հեռագիրներ աշխարհիս ամեն կողմերից:

նամական նամակների համար, որ նա գրել է իր հայրենիքի ու զօրքի նկատմամբ: Եւ այդ աչքակապութիւններն անելով, կառավարութիւնը խուսափեց որ և է ապացոյց մէջ բերելու, ուղղակի կամ կողմնակի կերպով, թէ Գրեյֆուսը դատապարտւած է իրաւամբ և օրէնքի համաձայն:

Եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհն իրարանցման մէջ ընկաւ: Ֆրանսիայում պայքարը մղեցաւ խիստ կերպով: Այդտեղ բոլորեցեցան հասարակական կրթերը, այդտեղ կարծիքների հակաճառութիւնները միմեանց բաղեցեցան զարմանալի ուժգնութեամբ, այդտեղ, այդ պարզ խնդրի շուրջը, կազմեցան երկու հակառակ բանակներ, գրգռւած, սպառնական, անհաշտ: Եւ այդ ամբողջը, աճելով, հրահրելով, գուրս ժայթքեցաւ Ֆրանսիական եղբրքներից և ընդլայնացաւ մինչև միջազգային ծաւալի ու նշանակութեան: Եւ այդ բոլորը մի մարդու համար: Ոչ. այդտեղ երկու հակառակ սկզբունքների կռիւ էր: Սկզբունքը մարդու ու քաղաքացիի ազատութեան ու իրաւունքի և սկզբունքը մէկ անպատասխանատու զինւորական իշխանութեան: Առաջինի պայքարի զէնքն էր՝ արդարութիւնն ու ճշմարտութիւնը, երկրորդինը՝ բարբարոս հակահրէականութիւնն ու կաթոլիկութիւնը: Եւ, տարօրինակ տեսարան, այն երկիրը, որ մի դար առաջ յայտարարեց ու ձեռք բերաւ մարդկութեան համար մարդկային ու քաղաքացիի իրաւունքները, յաղթելով և, թուում էր, ընդմիշտ ոչնչացնելով զինւորական ու կրօնական, սրի ու խաչի, լուծը—այսօր, դարուս մէջ ունեցած նոյնօրինակ կռիւներից ու յաղթանակներից յետոյ, բռնեցորդ դարու շէմքին, կրկին գլորւում է հասարակական նմանօրինակ ալեկոծումների մէջ: Այսօր այդ երկրի զինւորական բարձրագոյն ատենը բռնանում է օրէնքի վրայ և ապօրէն կերպով դատապարտում է մի մարդու, մի սպայի, և ապա յայտարարում, որ ինքն անսխալական է, որ ինքն օրէնքից բարձր է, որ իր գործողութիւնների համար ինքն պատասխանատու չէ ազգի առաջ: Եւ այդ կամայականութիւնը, փայլուն սրի այդ խաղաղեցնելը Ֆրանսիական ազատ ազգի գլխին գտնում է եռանդուն ծափահարութիւններ, ցոյցեր, շարժումներ նորն ազգի ամբողջ կողմից: Ֆրանսիական ազատ կոչւած երկրի զինւորական բարձր իշխանութիւնը, հանրապետական կոչւած կառավարութեան օջակցութեամբ և կուրացած ու չօլինիստ ամբողջի անմիտ ցոյցերի աղաղակների մէջ, յայտարարում է գործով, որ մէկ կամ մի բուռ բարձր զինւորականներ իրաւունք ունեն իրանց բնահաճոյքը գործադրելու ամեն մի Ֆրանսիացի քաղաքացիի ազատութեան, կեանքի, պատւի վրայ: Այդ բաւական չէ. նրանք դրանով ստեղծում են կրօնական հալածանքներ, որոնց թափած արեան միջից կարողանայ ծնունդ առնել Ֆրանսիական ազգի գլխին զինւորական արիւնալի տապարը, որ Սէդանում իջաւ նրա վրան պարտութեան աղէտով և ամօթալի կորստի վատանգով: Ինչպէս կեղծ ասպետ Բուլանտէի ժամանակները, այժմեան կղերական ու զինւորական թեակցիան, իր եռան առած Բուլանտէի նախկին état-major-ը, Ռօշֆօր, Գէրուլէզ, Միլիվուա և այլն և յարուցելն առած Բուլանտէական խառնիճաղանձը, չօլինիստ, տըն մար ու ամբարտաւան ընթացքով իրան հռչակելով միակ հայրենասէր, փայփայում է իր երազները—զինւորական իշխանութեան առաջնութիւն, եթէ ոչ մի նոր միապետութեան վերահաստատումով, գէթ ներ-

կայ բուրժուազական, յետագէմ հանրապետութեան գլխարկի տակ:

Եւ այդ խաւար գործողութիւններն աջողութեամբ պսակելու համար և այսօր էլ խեղդելու արդարութեան պահանջը, որ հնչում է Զօլայի ձայնում, այդ խաւարամիտներն իրանց զէնք դարձրին չօլինիզմն ու հակահրէականութիւնը, Գրեյֆուսը լինելով հրէայ: Մարդկութիւնն ապականող այդ հակահրէական վայրենի ակտը յարմար միջոց էր նրանց ձեռքին՝ գրգռելու Ֆրանսիական կոյր կաթոլիկներին ստոր բնաղջները, Փանատիկոսութիւնը, որ չէ տարբերում մահմետական Փանատիկոսութիւնից: Վերջինս աւերեց ու կոտորեց հայերին, իսկ առաջինն ամբողջ շաբաթ աւերեց ու ջարդեց բազմութիւ հրէաներ Ալժիրիայում և կողոպտեց ու կոտորատեց այդ տարաբախտ ազգի անհատներին պատկանող խանութներ: Ֆրանսիայի զանազան կողմերում, Պարիզում անգամ: Եւ այդ զուելի ու տըգեղ հակահրէականութեան միջոցով է, որ խաւարի ոյժերը գրգռում են միամիտ հասարակութեանը Զօլայի դէմ, թերեւ անմեղ դատապարտւած Գրեյֆուսի դէմ, մարդկային կեանքի դէմ, արդարութեան դէմ, ազատութեան դէմ: Նրանք ծարաւել են մարդկային արեան: Բախտի բերմամբ, սուլթանի ծառայ շանօտօն մինիստր է. նա նրանց ցոյց կը տայ այդ ծարաւը յագեցնելու միջոցը...

Եթէ Զօլան — ինչպէս և նրա համագլխի համախոհները—խկապէս իր հզօր բողոքով ուրիշ նպատակ չունէր, եթէ ոչ ազատել իր հայրենիքը մի խուժք “տըխմարների, յանցաւորների, ինտրիգանների” կամայական ու ծաղրածական արդարադատութիւնից, դատական հնամաշ ու ինկվիզիցիական կարգերից, և պահանջել արդարութիւն՝ ճշմարտութեան համաձայն, արդարութիւն սկսած ամենախոնարհից մինչև ամենաբարձրի համար, արդարութիւն ամեն մարդու համար, ինչ ցեղի ու կրօնի էլ նա պատկանէ—նա արաւ և մէկ ուրիշ մեծ գործ: Նա մեծ ծառայութիւն մատուցեց իր հայրենիքին, նախազգուշացնելով նրան այն խաւար ոյժերի դէմ, այն թեակցիայի մասին, որ, ինչպէս աւաղակը՝ ճանապարհորդին, շարունակ փնտռում է վարկեանն իր յարձակումը գործելու: Ֆրանսիական ազգի ազատութիւնների վրայ:

Եւ այդ բոլորից յետոյ Զօլան ու իր համախոհներն են, որ չարաչար և ամենազղելի թշնամանքներով հալածւում են, Զօլան ու իր համախոհներն են, որ հռչակւում են հայրենիքի դաւաճաններ, թշնամիներ, դրամակուլներ, ազգակործաններ... Ռբրան ողորմելի են և իրար նման ամեն երկրի և ամեն ազգի խառնիճաղանձները... Զօլայի կողմից պարզ և ուղղամիտ կերպով ներկայացրած ճշմարտութեան պահանջի առաջ արգելքներն ու խոչնդոտները, համեմաւած ամեն սուտերով, կեղծիքով ու մեքենայութիւններով և քօղարկւած raison d'état-ի չօլինիստական խրտուիլակով, գործադրեցան զարմանալի ծարպիկութեամբ: Իստէրհազներին պէս հայրենիքն անպատուողներ և զինւորական բարձր իշխանութեան խնամախաններ ու խաւարամիտներ թագնեցան Ֆրանսիական ընդհանուր զօրքի պատուի բողի տակ և մեղադրեցին Զօլային, թէ նա անպատուում է զօրքին: Զարձակել այդ զինւորական խմբակի անհատների վրայ, անշուշտ չէ նշանակում յարձակել զօրքի վրայ հաւաքական կերպով: Ամենքը գիտեն, որ Բուլանտէներ

էլ եղել են, բայց Բաղէներէի ամօթը չէ կարող ընկնել ընդհանուր զօրքի վրայ, ինչպէս և ընդհանուր զօրքի պատիւը չէ կարող ծածկել Բաղէներէի և կամ նոյն իսկ անարժաններէի ու ինտրիգաններէի անունը: Սակայն, յամենայն դէպս, ոչ մի վարանում չէ կարող լինել — ընտրել զօրքը, թէ ճշմարտութիւնը, որ ամեն բանից բարձր է:

Չօլան ցանկացաւ, որ կառավարութիւնը նրան դատի հրաւիրէ այն ամբաստանութիւններէ համար, որ ինքն արել էր ղեկնորական բարձր իշխանութեան դէմ: Կառավարութիւնը ստիպւած հրաւիրեց, բայց ամեն բռնութիւն, սարսափ, մեքենայութիւններ չարեց, որ պահանջած լոյսը դատի միջոցին երևան չը գայ և Չօլան էլ դատապարտէ: Այդ դատական ձեւերին կարող էր նախանձել նոյն իսկ մեծ Բարդասպան Համան: Քրանսիական միմիտները, Մէլինները և Հանտօները, որոնք գաղտնի կերպով բաջալերում էին Մեծ Ոճրագործին կոտորելու հայերին և փոխադարձ իրանց կրօնքերը զարդարում նրա ազամանդէ փսխունքներով, անտարակոյս պէտք է նրանից էլ արդարադատութեան և հրէաներին մորթելու գեղեցիկ օրինակն առնէին: Չօլան, քրանսիայի գրական ամենամեծ պարծանքը, դատապարտուեցաւ մի տարի բանտարկութեան: Չօլան և ամենքը, սակայն, գիտեն, որ Գրէյֆուսի գործը դեռ վերջացած չէ: Չօլան չէր կարող չը դիմել բուրժուական դատարանի, որովհետեւ նրան պէտք էր լսեցնել տալ իր արդար ու վսեմ բողոքը: Բայց այդ դատարանից արդարադատութիւն նա սպասել չէր կարող: Չէ որ հէնց այդ արդարադատութեան բացակայութիւնն է, որ նրան դրդեց անելու իր յանդուգն ու պատմական բողոքը: Արդարադատութիւնը և արդարութիւնը կը հաստատեն աշխարհում միայն օրերում ընդհանուր հաւասարութեան ու ազատութեան, որ երազում է «Ժէրմինալ»-ի հեղինակը: Եւ այդ օրը, երբ բողոքովն մոռացած կը լինեն ամեն Հանտօներ, պատերազմական միմիտս Բիլլիօներ և այլ զօրապետ Պելլիէներ, հարազատ աղգը պարծանքով միշտ կը յիշէ այսօր հալածւած Էմիլ Չօլա անունը:

Ա

ՆԱՍՏԱԿ ԷՄԻԼ ԶՕԼԱՅԻՆ.

Անցեալ փետրւարի 12-ի թուով «Հնչակի» խմբագրութեան կողմից Էմիլ Զօլային ուղարկեցաւ հետեւեալ նամակը, որ թարգմանօրէն ղնում ենք այստեղ.

Խորին հիացումով մենք հետևում ենք, հէնց սկզբից, այն բաջարի և այլ ևս պատմական կռիւր, որ դուք մղում էք յանուն մարդկութեան ու ճշմարտութեան: Այդ կռիւր մարդկային խղճի բողոքի պատմութեան ամենագեղեցիկ էջերից մէկն է: Հզօր կերպով դուք պաշտպանում էք ճշւածների դատն ու իրաւունքը, առանց խտրութեան աղքատութեան, կրօնի ու ցեղի: Ձեր բողոքը բարձրանում է ճշնշող-ների գէմ, որբան էլ նրանք հզօր լինեն, որպէս և ընդգէմ դատական անարդար ձեւերի ու գեղձումների, որոնք յիշեցնում են Մեծ Բարդասպան Արդիւլ Համիդի երկրներում տեղի ունեցող «արդարադատութիւնը»: Մեծ գրող՝ ձեր մղած կռիւր վեր է հանում ձեզ նաև իբրև մեծ բնաւորութեան և մեծ սրտի մարդ: Զայրացած ու բողոքող՝ դուք ելաք մէկդ ընդդէմ ամենքի, պահաջելով լոյս, աղաղակելով ընդհանուր աշխարհութիւն, ամեն տեղ և միշտ, վերգով-

լով ձեր, իբրև գեղարւեստագէտի, կեանքի արդիւնաշատ խաղաղութիւնը, ցանկանալով բանալ ճանապարհ համեստ ու հալածւած ճշմարտութեան առաջ և հակառակ յետադէմների ամեն մեքենայութիւնների, ամեն զրպարտութիւնների՝ դիմագրաւելով մի միամիտ կամ խաբւած ամբոխի կոյր ու անմիտ տառելութիւնը: Եւ ինչ վախճան էլ որ ունենայ այն մեծ գաղտը, որն ընթանում է այժմ ստեղծւած խղճագոտների խեղաթիւր շաւղով, այսուհետեւ ձեր անունն իբրև գրող և իբրև մարդ կրկնակի իերպով թանկագին է մըտածող մարդկութեան համար՝ Արեւմուտքից Արեւելք:

Մեր մեծարանքը մեծ քաղաքացիիդ:

ՍՈՒԼԹԱՆԻ ԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Վիեննայում հրատարակող Freie Osmaniche Post լրագրքին, ներկայ տարւայ իր № 4 -ում, Կ. Պօլսից հաղորդեց, թէ սուլթանի կողմից Եւրօպա ուղարկւած յատուկ պատգամաւոր Գ. Պիւլպիւկեան աջողել է իր կողմը թեքել l'Armenie-ի խմբագիր Մինաս Զեքազին:

Վերոյիշած լրագրի այդ թիւը ղեռ մեր ձեռքը հասած չէր, երբ լոյս տեսաւ «Հնչակի» ներկայ տարւայ փետրւարի համարը, որի մէջ, որպէս եւ «Հնչակի» ղեռ անցնալ տարւայ № 10 -ում, մենք ապացոյցների հիման վրայ նախագուշակում էինք եւ որդապէս յայտնում, թէ Զեքազին իր ընթացքով ուր է ձգտում եւ ուր կը հանգէ: Այդ մարդը վերջին մէկ-երկու տարւայ միջոցին իր ամբողջ ընթացքով արդէն կատարում է մի տեսակ agent provocateur-ի դեր, սուլթանական զրգոռ ու ղիմակաւոր աշխտի դեր: Թիւրքական կուտորայի ու կրթութեան այդ գաւազը, հաստ ղիմակն իր երեսին եւ կեղծիքն իր շրթներին, հերքէ ջրալի ու երկմտի ոճով կամ չը հերքէ վիեննական լրագրի տեղեկութիւնները մի եւ նոյնն է: Պաշտօնական տեղեկութիւնները չեն, որոնք ապացոյց տային Զեքազի անկման: Այդ անկման ապացոյցը նրա թերթն է, մէկ աղաւտ մտքի խաչագողութեան այդ շտեմարանը, եւ նրա ընծած ուղղութիւնն է՝ ոստիկանական ամբաստանութիւններ տարածել եւ կողորդելոսեան արցունքներով գովացրած՝ ջեզիտութիւն: Այդ անկումը քնական ու տրամաբանական հետեւանքն է Զեքազի եւ իր նմանների ընծած կատաղի, յարձակողական ընթացքի յեղափոխական գաղափարի եւ յեղափոխական գործիչների դէմ, որոնք այդ գաղափարն են միշտ կրել ու ներկայացրել, որոնք շատ քաւ ճանաչել են, թէ ինչ պտուղ է Զեքազը: Այդ անկումը ինքնաբեր ու անխուսափելի արդիւնքն է այն հոտած, խաւարամիտ, թիւր ու խակ կարծիքների, այն կեղծաւոր աշխատակութեան, որով Զեքազը սկզբից ի վեր թող է փշուր միամիտների աչքին, յուսալով այդ եղանակով յագեցում տալ իր փառամոլական եւ այլ անխոստովանելի տենչանքներին: Եւ քանի որ յեղափոխական գործը մեծ ու եռանդուն էր, նա իր պոչըն էր խաղացնում յեղափոխականների առաջ եւ այդպիսով իր ղիմակը պահում էր, երազելով նրանց ետեւից սողալ դէպի վեր, դէպի իր տենչի իրագործումը: Բայց յեղափոխական գործը, մեծ տէրութիւնների հակառակութիւնների շնորհով, ստացաւ հարւած, եւ Զեքազն այդ կողմից օգտուելու իր յոյսը կորցրեց: Յեղափոխական գաղափարը թէեւ դարձեալ առիւծ էր, բայց արդէն վիշաւորւած առիւծ, եւ ահա Զեքազի պէս ճանձնեղ համարձակութիւն գտան եւ սկսան քացարձակ կերպով խաճճել ու անհանգստացնել առիւծին: Բայց յաւիտենական պատգամաւորի ղիմակը պատռեցին եւ նա, տեսնելով որ թող փշելու դարն անցել է, կամաց-կամաց երեւան հանց իր խկական քնութիւնը եւ կողմնակի, երկմտի, ծուռ ու մուռ խօսքերով ու ընթացքով ձգտեց իր կեանքի կէտ նպատակին հասնել հակառակ ուղիով-սուլթանական աշխարհութիւնն ու ներողամտութիւնը վաստակելով: Բայց եւ այնպէս հայրենասէրի ղիմակը պահել երեսին ձեռնտու է: Սուլթանն աւելի շնորհակալ կը լինի այդ սատանայական խաղից: Գայլը գառան մորթով ոչխարների հօտում աւելի մեծ աղետ կարող է բերել: Օրինակ ծեղ Ա. Արփիարեանը, որ մինչեւ հիմա էլ լրջաբար շարունակում է Հնչակեան անունն իր հոտոսանաւարոյական եւ ոստիկանա-նազմական թերթի ծախսովն ղնել, իր անւան ամբողջ ստորագրութեամբ տակը: Դաւաճաններն արդէն դաւաճանութիւն անելիս՝ հազար կողոնքների են ծալում՝ հաւատացնելու համար, թէ հայրենասիրական մեծ գործ են անում: Սովետականութիւնը նրանց խելքն է կազմում, սուտն ու կեղծիքը նրանց հոգին, իսկ լրբութիւնը նրանց գէնքը: Հարցրէք օսմանցի հայրենասէր Մուրատ Բէյից, թէ ինչո՞ւ սուլթանի ոտքն ընկաւ: Նա ծեղ կը պատասխանէ՝ «յանուն հայրենասիրութեան»: Հարցրէք միւս օսմանցի հայրենասէր Զեքազից, թէ ինչո՞ւ նա համաօսմանցիական տենդով է բռնւած, ուրանալով գուր-

հայկական դատը եւ սպասելով թեթեւ պատրաստի, գէթ իր հայրացած «մի քարծիր անծնաւորութեան» սուլթանի կողմից իր մօտ պատուիրակ զաւրն, քաղաքակապէս սուլթանի ոտքն ընկնելու համար: Նա ծեղ կը պատասխանէ պարծանքով «յանուն հայրենասիրութեան»: Հարցըք Զերագեց, թէ ինչո՞ւ է սուլթանի աջէնտներին յատուկ կատաղութիւն ցոյց տալիս եւ զրպարտութիւններ փսխում մեր դէմ, «չնչակի» դէմ: Նա ծեղ կը պատասխանէ անմեղութեան ժպիտով «յանուն հայրենասիրութեան»: Զերագեցի ծեղքը հայրենասիրութիւնը մի պարկ է, որի մէջ ամեն սուտ ու կեղծիք լքցում է, մի ղիմակ է, որ ամեն զոյնի փոխում է, մէկ ապրանք է, որ խաշազողութեամբ հանում է վաճառքի:

Ա.

Յ. Գ. Զերագեցի վրդովում է նազարթէկի միջնեւ անգամ հոր գերեզմանի հանգստութիւնը եւ նրա մասին իսկ սուտեր է տարածում: Դուք ուզո՞ւմ էք իմանալ թէ նա ո՞վ էր եւ ինչ: Նա Հայ էր: Իսկ կարո՞ղ էք ծեղ տալ այդ անունը: Ո՛չ:

ԲԵՃՅՅ

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Թիւրքական զինւորները հետզհետէ աւելանում են Մակեդոնիայում եւ Բուլկարական սահմանադիտում: Նորանոր դէպքեր յաջորդում են այնտեղ եւ գնալով քաղաքական սուր երևոյթ ստանում: Սէֆուլլահ փաշան 2,000 զինւորներով եւ երկու թնդանօթով առաջացաւ Լազարիւնայի վրայ՝ Տրիգալայի մօտ: Նա բռնի միջոցներով տուրք էր հաւաքում գիւղացիներից, որոնք մերժել էին վճարել: Գիւղացիները դիմադրեցին թիւրք զինւորներին եւ տեղի ունեցաւ կանոնաւոր հրացանաձգութիւն: Թիւրքերը ուժեղացան բազմաթիւ գիւղեր. կիներ եւ երեխաներ ապաստանեցան լեռները: Արիւր շարունակեց եւ երկրորդ օրը գիւղացիներից շատեր սպանեցին: Յոյն կառավարութիւնը բողոքել է Գրան սոյն անկարգութիւնների դէմ,

Թիւրք կառավարութիւնը խիստ բարբարոս վարմունքով խուզարկել է Մակեդոնական սահմանագրւթում բազմաթիւ բուլկար բնակիչների տները: Մօտ 500 կասկածելիներ բանտարկւել են եւ նրանցից շատեր ենթարկւել գազանային չարչարանքների: Տեղի են ունեցել թիւրք ժանտարմիայի մասնակցութեամբ թալանում, առևանգում եւ բռնաբարութիւն:

Բուլկարիոյ Կ. պօլսի գործակաւորը մի տեղեկագիր է յանձնել Մեծ-վեզիրին բողոքելով խաբիւրի մէջ թիւրք պաշտօնէութեան անկարգութիւնների եւ բուլկար բանտարկեալների անարդար դատավարութեան համար:

Սուլթանը հրամայել է ազատ արձակել Գօսօփայի նահանգի բոլոր բուլկար բանտարկեալներին, բացի 15-ից, որոնք նկատուում են յեղափոխականներ: Գօսօփայի վիլայէթում բանտարկեալների թիւը կը հասնի 595 հոգու, որոնց մէջ կան 30 ուսուցիչներ եւ քահանաներ:

Սոյն բանտարկեալների վրայ գործադրւած են ամենասովոր չարչարանքներ, որոնք յատուկ են միայն թիւրք պաշտօնեաներին ու զինւորներին: Կանանցից շատերին բռնաբարել են, մինչեւ իսկ տասը տարեկան մի աղջկայ՝ իշտիպում: Տանջանքներից սպանւած են բաւական թւով:

Թէվֆիգ փաշան Ռուս կառավարութեան դիմումների համաձայն խոստացել է վճարել Ռուսաստանին 1,000,000 ոսկի՝ յունական պատերազմական տուգանքից ստացւած փողերից:

Ռուս կառավարութիւնը անսովոր բանակութեամբ

զօրք է աւելացնում Կովկասի մէջ: 15,000 զինւոր է ուղարկւած այդտեղ հաստատւած զօրքի թւի վերայ: Ուղարկւած է մեծ թնդանօթներ Կարս, Օլտի, Ալէքսանդրաբօլ, Նոյնպէս եւ 12 ամրոցի թնդանօթ: Հաղորդում են նաեւ, որ գարնան պիտի ճամբւեն այդ տեղերը մեծ բանակութեամբ ռազմավթերք:

Թիւրքի սպառազինութիւնները շարունակւում են: Նորանոր օգնութիւններ չեն դադարում հասնել Մակեդոնիայ: Միւս կողմից Բուլկարիան եւս համախմբում է սահմանագրի վրայ հաստատուած զինւորական ոյժ: Հաւաստում են, որ սուլթանը առաջարկում է պետութիւններին մի նօդ, որով խնդրում է եւրօպական համերաշխ միջամտութիւն՝ արգելելու համար մի պատերազմ Բուլկարիայի հետ:

Արդէն վաղուց վերջացած են յոյն եւ թիւրք կառավարութիւնների մէջտեղ հաշտութեան պայմանները, որոնք պարբերաբար հրատարակւեցան տեղական թերթերում: Սակայն հակառակ դրա, Բ. դուռը դուրս չէ պատերազմական նորանոր պատրաստութիւններ անել բուլկար, սերպ եւ յոյն սահմանագրւթութիւններում: Սուլթանի քաղաքականութիւնն է դա այս վերջին մի բանի ամիսների մէջ: Գաղտնի հրահանգներ ուղարկւեցան Էդհէմին Զէյթունի ապստամբութեան միջոցին յաղթահարւած, իսկ Թէսալիայում զաղի հանդիսացած այդ թիւրք փաշային՝ որպէս զի բանակի վիճակը բարելաւէ, գիրքերը ամրացնէ եւ արդէն կուղարկւեն հետզհետէ պաշար, ռազմավթերք եւն, երկար ժամանակ բաւականանալու համար:

Մի խումբ բուլկար յեղափոխականներ Մակեդոնիա զէնք փոխադրած միջոցին սահմանագրի վերայ կը պաշարւեն թիւրք զինւորներից եւ երկար մի կուրից վերջ ապստամբները ետ կը բաշեն՝ կուրի դաշտի վրայ թողած իրենց ընկերներից մի քանիսին: Այդ դէպքից յետոյ բազմաթիւ բուլկարներ ձերբակալեցան Մակեդոնիայի մէջ: Հազիւ քիչ ժամանակ անցած, մի սուլար խումբ արնավուտներ կը փորձեն Եանեայի մօտերը պաշարել մի թիւրքական պահականոց, բայց աղողութիւն չը գտնելով, աւելի զայրացած, կը յարձակւեն 7 ժամ հեռի մի թիւրքաբնակ գիւղի վրայ եւ մեծ փնտնել կը հաջնեն այնտեղ:

Լոյս տեսաւ

ԸՄՓՓԻ

Ս Ա Մ Ո Ւ Է Լ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ (360-400)

Գ Ի Ր Բ Ա . Բ . Գ .

Բ . տպագրութիւն

Վ ի ն ն ա 1898.

Մ խ ի թ ա ռ ե ա ն տ պ ա ռ ա ն .

Վ ի ն ն է 3 ը բ . 50 Կ . կ ա մ 9 Փ բ .

Գ ի մ ե լ . Mme A. Raffi. 270. Uxbridge Rd. LONDON W.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ եւ դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush London W. [Angleterre].

«ՀՆԶԱԿ»-Ի ՏՊԱՐԱՆ.

1 Օ Ն Դ Օ Ն .